

1888. — Ս. Կարապետի հարաւային պատի արտաքին երեսին վրայ, պատին ծայրը, այնպէս որ գրեթէ դէմ դիմաց կու գայ Գափամաճեան Յարու-թիւնի վերոյիշեալ յիշատակարանին հետ.

— “Տիկին Իսկուհի Փափաղեան / նուիրեց երեք հարիւր ոսկի Օսմանեան / վասն հոգւոյ իւր վախճանեալ մօր / Մաքրուհի Տիկնոջ Գափամա-ճեան, / որոյ մարմինն ամփոփուած է / իւր ամուս-նոյն շիրմին մէջ / ի գաւթի Ս. Եկեղեցւոյս. / 1888 / 1”

* * *

Յաւելուածներու մէջ կը փափաքէի դնել Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Քարոզիչներուն, Քահա-նաներուն եւ աշխարհական մարմիններուն (Հոգա-բարձութիւն, Թաղական Խորհուրդ) ցանկերը՝ պատմական հակիրճ տեղեկութիւններով ու դիտողութիւններով. բայց կարելի չեղաւ այս փափաքիս իրագործումը: Որովհետեւ թէ կա-նոնաւոր կամ անկանոն մասնաւոր տոմարներ չկան եւ թէ այդ ցանկերուն նոյն իսկ ամէնէն կարճ ուսումնասիրութիւնը շատ լայն տեղ մը պիտի գրաւէր՝ Կոլոտի նուիրուած ուսումնասիրութեան մը մէջ: Եւ եթէ մենք այս գործին մէջ մաս մը յատկացուցինք Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հաս-տատութեան եւ իրեն հետ պատմական կապ ու արժէք ունեցող նիւթերուն, պատճառը սա՛ է որ՝ Կոլոտի մասնաւոր գուրգուրանքին առարկայ եղած էր Կ. Պոլսի այս ամէնէն հին Հայ եկեղեցին. ու-ղեցինք նաեւ այս առթիւ կորուստէ պահպանելու օգնել Ս. Լուսաւորչի պատմութեան վերաբերեալ այլազան գրաւորականներու (= document) ա-տաղծը, որչափ որ ձեռքի տակ ինկան եւ աչքէ չվրիպեցան:

Այսպիսի ատաղձներ կարեւոր են իւրաքան-չիւր եկեղեցւոյ համար. մեր բոլոր եկեղեցիներ